

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԼՈՆՏՈՆ ՅՐԱԴԻՐՈՒՄԾ
ՎԱՐՉԱՊԵՏ ԹՈՆԻ ՊԼԵՐԻ ԿՈՂՄԵ

Արամ Ա. կաթողիկոս երկ անգամ Լոնտոն, մասնակցելու համար Անգլիոյ վարչապետ Թոնի Պլեյրի կողմէ կազմակերպուած քրիստոնէայ - իսլամ հանդիպման մը: Արդարեւ Անգլիոյ վարչապետը շուրջ 20 հանրածափ քրիստոնէայ եւ իսլամ դէմքեր հրաւիրած է աշխարհի բոլոր կողմերէն, խորհրդակցելու համար քրիստոնէաներու եւ իսլամներու միջեւ գործակցութիւն յառաջացնելու կարելիութիւններուն մասին:

Ան նաեւ հրաւիրած է Արամ Ա. կաթողիկոսը: Անգլիոյ Անկլիքան եկեղեցւոյ պետին կողքին, մեծափառ միակ հոգեւոր պետն է յիշեալ հանդիպման մասնակցող: Ան ժողովին մէջ բաժնին ատենապետութիւնը պիտի ստանձնէ: Վարչապետ Թոնի Պլեյր անձամբ ներկայ պիտի գտնուի ժողովին եւ իր խօսքը պիտի արտասանէ:

Լոնտոնէն Արամ Ա. կաթողիկոս պիտի անցնի Ժընեւ, նախագահելու եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ժողովներու:

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ

ԱԶԳԻՆ ԶԵՆՔԸ

«Հ. Յ. Գաշնակցութեան մասին խօսելէ առաջ պէտք է ներամփոփուիլ եւ պզտաւորութիւնը այնպէս, ինչպէս՝ Ս. պատարագէն առաջ», կ'ըսէր Գաշնակցական նշանաւոր հռետոր մը, Գաշնակցութեան Օրոնա՛ն առիթով իր ճառին սկիզբը:

Ճիշդ է, որովհետեւ հայ ժողովուրդի ծոցէն ծնած եւ անոր տառապալի թէ պանծալի պատմութեան հետ կապմտորութեամբ այս կապակերպութեան համար առաջնահերթ են ժողովուրդը, գաղափարը եւ գործը, եւ ոչ թէ՛ ի նքր կամ իր ղեկավարութիւնը: Խօսիլ Հ. Յ. Գաշնակցութեան մասին չի նշանակեր տայ սոսկական կուսակցութեան մը պատմութիւնը կամ ղեկավարի մը կենսագրականը, այլ՝ քննարկման կարգով հաշիւ տայ ժողովուրդին, նկարագրել եւ արժեւորել գաղափարական, բարոյական եւ կազմակերպական այն հասկացութիւնները, որոնց շնորհիւ հայ ազգը գոյատեւած է իր փորձանայի պատմութեան ընթացքին, դէմ դրած է ազգեր բնաջնջող արհաւիրքներու, բնական թէ մարդատեղծ աղէտներու, կեղեքումի եւ ստրկացումի, քանդումի եւ բնագրաւումի եւ ցեղասպանական ահաւոր Ռճիրին:

Արտայայտուիլ Հ. Յ. Գաշնակցութեան մասին կը նշանակէ վեր առնել հայոց պատմութիւնը եւ Հայ Դատը ներկայացնել Հայաստանի աշխարհաքաղաքական անցեալը եւ ներկան ու խօսիլ հայ ժողովուրդի քանակական եւ որակական իրավիճակին մասին ճշդելով այն սկզբունքները, որոնք անիրաւուած են ոտնակոխուած հայ ժողովուրդին կուտան հիմնաւորումներ եւ կը ներշնչեն հաւատք՝ պայքարելու ի խնդիր պատմութեան, արդարութեան, ազգի եւ հայրենեաց: Բայց, խօսիլ Հ. Յ. Գաշնակցութեան մասին կը նշանակէ նաեւ յիշել մարդկային եւ ընկերային այն արժեքափերը, որոնք պայքարող հայ ժողովուրդը որուր կը բերեն հատուածական կամ ցեղապաշտական ազգավաստորացումը: Եւ կը տեղադրեն քաղաքակրթութեան առաջին դիրքերուն, արդարամիտ եւ ստեղծագործ հաւաքականութիւններու շարքին: Ներկայացնել Հ. Յ. Գաշնակցութեան ռազմավարութիւնը եւ հայ ազգային պայքարը կը նշանակէ նաեւ ընդգծել հայութեան ուժին աղբիւրները՝ մարդկային որակը, միասնական կեցածքը, կապակերպուած եւ յարատեւ մարտիկները ընդդէմ անարդարութեան եւ բիրտ ակոյր ուժերուն: Հ. Յ. Գաշնակցութեան ընդմէջէն կը ներկայացուի հայ ազգային հաւաքական գիտակցութեան եւ բարոյական արժեքներուն վրայ հիմնուած արդիւնաւէտ կազմակերպութիւնը, որուն ուժը կը գտնուի հաւատքի, զոհաբերութեան եւ գործնական մտածողութեան հրաշալի համադրութեան մէջ:

Այո՛, անկախաբար իր կատարած ազգակերտ եւ հայրենակերտ գործերէն, ֆետայիներու, գործիչներու եւ ապստամբութիւններու սերունդներ սնուցանող արիւնէն ու աշխատանքէն, եւ իր կազմին յարատեւ ու աննկուն դիմադրութենէն, Հ. Յ. Գաշնակցութիւնը ազգի գաղափարական եւ մարտունակ կազմակերպութիւնն է եւ իրեն այդ՝ կեանքի եւ պայքարի հիմնական արժեք:

Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ Հ. Յ. Գաշնակցութեան սկզբունքները եղած են եւ կը մնան անփոփոխ՝ առաջնահերթ են ազգը եւ հայրենիքը, կենսական է գործնական պայքարը եւ արդիւնաւէտ պայքարի համար անհրաժեշտ են գաղափարական-բարոյական արժեքները: Հայաստանի վերանկախացումէն մինչեւ Արցախի պատագրական պայքար, սփիւռքեան գաղթածախներու ազգային կազմակերպումէն՝ սերունդներու դաստիարակութիւն եւ քաղաքականացում, Հ. Յ. Գաշնակցութիւնը գործեց անխաբար հաւատքով եւ անշեղ ռազմավարութեամբ, ան մնաց հաւատարիմ իր գաղափարաբանութեան եւ կազմակերպական ոգիին:

Այսօր, աւելի քան երբեք, հայ ժողովուրդը պահանջք ունի սկզբունքային եւ առաջնորդող գործերու: Հայաստանի պետականութեան հպօրացումը՝ տնտեսական վերականգնումէն՝ աշխարհաքաղաքական անբապանում, ընկերային արդարութեան հաստատումէն՝ ազգային բնակի հպօրացում, Արցախի անկախութեան ամրագրումը, ինչ-
Շարք՝ էջ 3

ՔԱՊՈՒԼԻ ՄԷՁ

ՔՈՒՆ ՓԱՌԸԸ ԿԸ ԸԱՍՏԱՏԵ, ԹԵ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԿԸ ՄԱՅ ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ԿՈՂՔԻՆ

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլը երէկ Քապուլ յատուկ այցելութեան մը ընթացքին յայտարարած է, թէ Ուաշինկթըն Աֆղանիստանի կողքին պիտի կանգնի, խոստանալով երկրին մէջ իսլամական արմատականները ընաշնջել:

Մինչ ամերիկեան ռազմական օդանաւերը երկրին տարածքին «Քալիտա» յի եւ թալեպան զինեալներ կը փնտնէին, Փաուըլ Աֆղանիստանի նոր ղեկավարներուն յայտնած է, թէ իր կառավարութիւնը կը ծրարէ նշանակալից մասնակցութիւն ունենալ երկրին վերակառուցման մէջ:

Հարաւային Գանտաւար քաղաքին մէջ, ամերիկեան ծովային անդամներ հարցաքննած են մարզ մը, որ յայտնած է, թէ թալեպան շարժումին ինթապէս գործակից կանգնող բանալի անձ մը եղած է, մինչ բրիտանական ոստիկանութիւնը կատարած է ենթադրեալ ահաբեկիչներու շարք մը ձերբակալութիւններ, Չայնեզիայից ամբաստանելով «Քալիտա» ի անդամ ըլլալու յանցանքով:

Այս բոլորէն շատ հետո՛ւ Ֆրիլիբաններու մէջ, Մ. Նահանգներ ահա ընկալութեան դէմ իրենց պատերազմին մէջ նոր ճակատ մը բացած են, հարաւային կողքին մը վրայ կեդրոն մը հաստատելով՝ միասնաբար համար Պըն Լատենի հետ կապեր ունեցող իսլամ ըմբոստներու դէմ միացեալ գործողութիւններուն:



Փաուըլ եւ Զարգայ

Փաուըլ, որ 1976էն ի վեր, Մ. Նահանգներու ամէնէն բարձրաստիճան պաշտօնատարն է, որ Աֆղանիստան կ'այցելէր, երկրին փոխանցման կառավարութեան ղեկավար չամիտ Քարգայ յայտնած է, թէ Ուաշինկթըն յանձնառու է ամէն ինչ ընելու՝ օժանդակելու համար երկրին:

Համաշխարհային Դրամատան գնահատումով, Աֆղանիստանի վերակառուցումը 10 տարւան ընթացքին 15 միլիարտ տոյր պիտի արժէ:

Մամլոյ միացեալ ասուլիսի մը ընթացքին, Քարգայ զիւրաւարտութեամբ իրեն յիշեցուցած է Փաուըլի, թէ բազմաթիւ աֆղաններ հարց կու տան, թէ արդեօք Ուաշինկթըն զիրենք պիտի լքէ՞ թալեպան ղեկավարութեան դէմ ամբողջական յաղթանակէ ետք, ինչպէս ըրած է 1989ին, ամերիկեան զօրակցութիւնը վայելող ըմբոստներուն կողմէ խորհրդային ուժերուն արտաբստումէն ետք:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՓՈՒԹԻՆ ԵՒ ԱԼԻԵԻ ՊԻՏԻ ՔՆՆԱՐԿԵՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Ազրպէյճանի մէջ Ռուսիոյ դեսպան Նիքոլայ Ռիպոյ յայտարարեց, որ Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւ Ռուսիա կատարելիք իր պաշտօնական այցելութեան ընթացքին նախագահ Վլատիմիր Փութինի հետ պիտի քննարկէ Լեռնային Ղարաբաղի տագնապը, սակայն ոչ ոռնս-ազրպէյճանական բանակցութիւններու ծիրէն ներս:

Դեսպանը նշեց, որ Ղարաբաղի հարցը Ազրպէյճանի կողմէ մեծ կարեւորութեամբ կը ներկայացուի եւ չափազանց անհրաժեշտ է կողկասի մէջ տեսական կայունութեան հաստատման տեսակէտէն:

Դեսպանին կարծիքով, Մոսկուա չէ փոխած իր դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի տագնապի գծով եւ հանդէս կու գայ ի նպաստ տագնապի խաղաղ լուծման: Ռուսիոյ դեսպանը յայտնեց, որ Փութին - Ալիեւ հանդիպումին ընթացքին ղարաբաղեան տագնապի լուծման նոր տարբերակներ կրնան քննարկուիլ:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսու կը հաղորդենք մեր սիրելի ժողովուրդի պաւակներուն, թէ Պէյրութի Կեդրոնական Շուկայի վերաշինութեան «Solidere» ընկերութեան ծիրէն ներս գտնուող Ս. Նշան Մայր եկեղեցւոյ յարակից ազգապատկան կայուածներու իրաւատիրութեան շուրջ յառաջացած տարակարծութիւնները հարթուեցան:

«Solidere» ընկերութեան յառաջացումէն առիւն, Ազգային Իշխանութեան իրերայաջորդ կազմերը երկարատեւ եւ հետեւողական բանակցութիւններ կը վարէին այդ ուղղութեամբ. ուրախ ենք յայտարարելու, թէ այսօր, անոնք օրինական համաձայնագիրով յանգած են բարոյք լուծումի:

ԴԻԻԱՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՐՔԻՒ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ՎԻՉԱՅԻ ԶՆՁՈՒՄԻՆ ԳԾՈՎ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ Կ'ԱՆԴՐԱԴԱՌՆԱՅ ԹՐՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԻՆ

Ամերիկայի Հայ Դատի դէմ հաստատուած Յանձնախումբը յայտնեց, որ թրքական կառույցներու միջոցով յայտարարութեամբ մը անդրադարձաւ Հայաստանի քաղաքացիներուն համար:

Շարք՝ էջ 3

حزب الطاشاق
الأحد ٢٠ ك ٨.٣٠ مساءً
NBN
Arabsat 3A at 26° East Freq. 11,785 GHz, Nilesat 7° West Freq. 12,130 GHz

ԿԻՐԱԿԻ, 20 ՅՈՒՆԻՒՆ 2002, ԵՐԵՎԱՆԵԱՆ ԺԱՄԸ 8:30ԻՆ ՀԵՏԵԻՏԵՔ ՊԵՏԿԵՐԱՍՓԻՌԻՒՒ «ԷՆ. ՊԻ. ԷՆ.» ԿԵՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ «ԼԻԲԵՐԱՆԻ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ» ՖԻԼՄԱՆԸ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՎԱԵՐԱԳՐԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԻՆ:

Հ. Յ. Դ. ԻՍՍ ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Կը բանախօսեն՝

ՅՈՎԻԿ ՄԽԻԹԱՐԵԱՆ



Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտեի Գերկայացուցիչ

ՎԻԳԷՆ Ա. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 18 Յունուար 2002, երեկոյեան ժամը 8:00ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» սրահին մէջ:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Լիբանանի Հ.Ս.Մ.Ի Շրջանային Վարչությունը, մեր մոդուլորդին ու մարզաբաժնի համակիրներուն ուղղելով իր խօսքը, կը փափաքի տեսնել պաննոն դաշտէն ներս խիտ շարքերով, ֆուտբոլի ներկայացուցչական խումբի խաղերուն, վստահեցնելով, որ ոչ մէկ ճիգ պիտի խնայէ խումբը պահելու իր փափաքած բարձրութեան վրայ:

Այս առիթով, վարչութիւնս կը հաղորդէ հետեւեալը.

1.- Ներկայացուցչական խումբի աւագ մարզիչ՝ էրք. Գէորգ Թահմիպեան, դադարած է իր պաշտօնէն, 15 Յունուար 2002էն սկսեալ:

2.- Շրջանային ֆուտբոլի յանձնախումբը, որ կը գործէր 17 Յունիս 2001 թուականէն, 14 Յունուար 2002էն սկսեալ, իր կարգին, դադարած է:

3.- 14 Յունուար 2002էն սկսեալ Շրջանային Վարչութիւնս ինք կը տանձնէ ներկայացուցչական խումբի բոլոր աշխատանքները ցնոր տնօրինութիւն:

4.- Ի մօտու, պիտի յայտարարուի նոր մարզիչին ու յանձնախումբին անունները:

Հ.Ս.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Պուրճ Համուտ,
17 Յունուար 2002

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԱՄՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՆԱ ԱԿՆԻ ԱԼԷՅ - ԱՆՍԱՐ՝ 2-0

Լիբանանի ֆուտբոլի ասոցիացիան Յրդ Հանգրըւանէն (9 Յունուար) յետաձգուած մրցումի մը, Ախա Ահլի Ալէյ արձանագրեց եղանակի իր երրորդ յաղթանակը, Պէյրութի Քաղաքացայետարանի դաշտին վրայ 2-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Անսարը, որ կրեց եղանակի իր երկրորդ պարտութիւնը: Անիկա իր առաջին պարտութիւնը կրած էր Սափէսէն (Հրդ Հանգրըւան) 4-3 արդիւնքով: Մոհամէտ Նասրը (67րդ) եւ Ջահէր Այնտարի (88րդ) նշանակեցին Ալէյի կազմին կողմը:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք Ախա Ալէյ բարձրացաւ 9րդ դիրք, իր ունեցած կոլեկլորէյի շնորհիւ գերազանցելով Պըրժը, որ նահանջեց 10րդ դիրք:

Ստորեւ դասաւորումը (14 խումբերն ալ կատարած են 7ական մրցում).

	ԿԺՏ	ՆՇ	ՍՏ
1.- Նըժմէ	14	13	6
2.- Սափէս	14	20	16
3.- Շապպ Սահէլ	14	8	5
4.- Ասֆա	13	13	6
5.- Ահս	13	11	7
6.- Սալամ	12	12	6
7.- Թաւամոնց Սուր	12	11	5
8.- Անսար	11	11	11
9.- Ախա Ահլի Ալէյ	10	8	8
10.- Պըրժ	10	10	11
11.- Ահլի Սալտա	4	6	15
12.- Հ.Ս.Մ.Ի	2	3	10
13.- Հ.Ս.Ս.	2	5	14
14.- Ռասիճ	2	4	15

ՍՊԱՆԻԱՅ ԶՈՒՊՈՒՆԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔ

ՖԻԿՈՒՆԵՐԵՍԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Սպանիոյ ֆուտբոլի բաժակի մրցաշարքին (ծանօթ Թագաւորի բաժակ անունով) քառորդ աւարտականի մրցումներուն, Ֆիկուերէս յաղողեցաւ պատմութիւն կերտելով, երբ Հանդիսացաւ Գ. դասակարգի միակ խումբը, որ ապահովեց կիսաւարտական Հանգրըւանին իր տոմարը:

Երթին, Քորտուպայի (Բ. դասակարգ) դաշտին վրայ 2-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած Ֆիկուերէս 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք իր հիւրին Հետ, հասաւ կիսաւարտականին:

Տեխոթիւն Քորուան դժուարութեամբ ապահովեց կիսաւարտական Հանգրըւանին իր տոմարը, հակառակ անոր, որ երթին անիկա 2-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած էր իր դաշտին վրայ՝ Ռէալ Վալադոլիտի ղէմ տեղի ունեցած մրցումին:

Ռէալ Վալադոլիտի դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին, դաշտին տէրերը Ա. կիսախաղին 2-0 արդիւնքով յաղթանակ, շնորհիւ՝ Ֆեռնանտոյի (4րդ) եւ Մարտիի (36րդ) նշանակած կոլերուն: Ցետ երկարձեռան, Քորուան նշանակեց իր կոլը, շնորհիւ Տիեկո Թրիստանի (110րդ) փենլախով:

2-1 արդիւնքով պարտուած Տեխոթիւն մրցումը աւարտեց ինը մարզիկով, էնրիքէ Ռոմերոյի (98րդ) եւ Ուոլթեր Գոնսալեսի (118րդ) կարմիր քարտ ստանալէն ետք:

Իրենց կարգին, Ռէալ Մատրիտ եւ Աթլետիքո Պիլոսո ապահովեցին իրենց տոմարը: Երթին իր դաշտին վրայ 4-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած Ռէալ Մատրիտ 1-0 արդիւնքով պարտուեցաւ Ռախո Վալեքանոյէն, մինչ Աթլետիքո Պիլոսո, երթին Վարզէլի դաշտին վրայ 2-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած, դարձին եւս յաղթանակ մը արձանագրեց (1-0):

ԹԵՆԻՍ. ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԲԱՅ ՄՐՅԱՇԱՐՔ

ԴԱԻԻԹ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԴՈՒՐՍ ՄԱՅ ՄՐՅԱՇԱՐՔԷՆ

Աւստրալիոյ մէջ տեղի ունեցող թենիսի բաց մրցաշարքին, Բ. Հանգրըւանի երէկուան մրցումներուն արձանագրուեցան անակնկալ արդիւնքներ. առաջին քսանին մէջ դասուած մարզիկներ դուրս մնացին մրցաշարքէն:

Արժանթինահայ Դաւիթ Նալպանտեան չկրցաւ անցնել Գ. Հանգրըւան, Բ. Հանգրըւանի իր մրցումին 6-7, 7-6, 7-5 եւ 6-3 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Ռէյնի Ֆերէյրայէն (Հարաւային Ափրիկէ):

Եթէ Նալպանտեան եղաւ դուրս մնացողներու շարքին, անդին աւելի լաւ դիրքերու վէջը գտնուող մարզիկներ ապրեցան աւելի դժուար պահեր:

13րդ դասուած ամերիկացի ինտիմոտիք 2րդ սեթին ծունկէն վիրաւորուելով մրցումը չկրցաւ շարունակել խրուածքի վան Լիուպիքի ղէմ, երբ արդիւնքը կ'ընթացարթի նպատակով վերջինին՝ 7-6 եւ 3-2:

15րդ դասուած Ֆրանսացի Առնո Բլեման գրեթէ ոչինչ կրցաւ յաղթանակ Կառուտիոյի (Արժանթին) ղէմ իր կատարած մրցումին եւ պարտուեցաւ 6-4, 4-6, 6-2 եւ 7-6 արդիւնքով:

Գերմանացի Ռայնըր Շիուլըր իր կարգին յաջողեցաւ անակնկալ արդիւնք մը արձանագրել, մրցաշարքէն դուրս ձգելով 17րդ դասուած Քարլոս Մոնոյ: Հակառակ անոր, որ սպանացի առաջին երկու սեթերը յաղթած էր: Մրցումը վերջ գտաւ 3-6, 6-7, 6-1, 7-6 եւ 6-2 արդիւնքով:

Վերոյիշեալ երեքին կրած պարտութիւնը պատճառ դարձաւ, որ Գ. Հանգրըւանին իրենց մասնակցութիւնը բերին 17 մարզիկներ՝ 32 դասուած մարզիկներուն մէջ:

Նիքոլա Էսթիւտէ (Ֆրանսա), Ալեքս Բալթրաստայի (Սպանիա) ղէմ տեղի ունեցած մրցումին թէեւ առաջին երկու սեթերուն պարտութիւն կրեց, սակայն յաջողեցաւ տանել վերջինական յաղթանակը, արձանագրելով 2-6, 2-6, 6-4, 7-5 եւ 6-4 արդիւնք մը:

Հանգիստ յաղթանակներ արձանագրեցին գուիցերիացի Ռոմէ Ֆեռնանտ, սպանացի Ալպէր Գոսթա, ամերիկացի Ռոտ Մարթին, ռուս Մարտի Մաֆին, չիլիցի Մարսել Ռիոս, գերմանացի Ռոմի Հասս եւ էքուադորի Նիքոլա Լափենթի, առանց պէտք ունենալով չորրորդ եւ հինգերորդ սեթերուն:

Երէկուան մրցումներուն, Ռոտիքէն բացի վիրաւորուող երկրորդ մարզիկը եղաւ պարզիցի Ալեքսանտր Սիմոնի, որ ռուսացի Անտոն Փաւէլի ղէմ իր մրցումը չկրցաւ շարունակել, երբ արդիւնքը կ'ընթացարթի նպատակով կ'ընթացարթի (Նոյեմբերին) տեղի ունեցած

0 արդիւնքով: Իրենց արձանագրած յաղթանակներէն ետք Մարտի Մաֆին եւ Ռոմի Հասս, Աւստրալիոյ թենիսի բաց մրցաշարքին առաջին 32ին մէջ գտնուող մարզիկներուն պարտութեան եւ դուրս մնալուն գլխաւոր պատճառը գտան երկու ամիս առաջ (Նոյեմբերին) տեղի ունեցած



Դաւիթ Նալպանտեան

Պէյք (Չինպապուէ) 6-1, 6-4 եւ 6-4

Թոտ Մարթին (Մ.Ն.) - Ջաւիէ Մալիէ (Պելճիպա) 6-3, 6-2 եւ 6-2

Նիքոլա Էսթիւտէ (Ֆրանսա) - Ալեքս Բալթրաստայի (Սպանիա) 2-6, 2-6, 6-4, 7-5 եւ 6-4

Կարտն Կառուտի (Արժանթին) - Առնո Բլեման (Ֆրանսա) 6-4, 4-6, 6-2 եւ 7-6

Մարտի Մաֆին (Ռուսիա) - Քրիստոֆ Ռոշիւ (Պելճիպա) 6-2, 7-6 եւ 6-1

Մարտելո Ռիոս (Չիլի) - Քարոլ Քուէրա (Սլովակիա) 7-6, 7-5 եւ 6-2

Ռէյնի Ֆերէյրա (Հարաւային Ափրիկէ) - Դաւիթ Նալպանտեան (Արժանթին) 6-7, 7-6, 7-5 եւ 6-3

Թոմի Հասս (Գերմանիա) - Ժան Ֆրանսուա Պաշել (Ֆրանսա) 6-1, 6-2 եւ 6-3

Նիքոլա Լափենթի (Էքուադոր) - Խոսէ Աքասուս (Արժանթին) 7-6, 6-2 եւ 6-3

Անտոն Փալի (Ռուսիա) - Ալեքսանտր Սիմոնի (Պրայի) 6-1 եւ 4-0 (Սիմոնի, վիրաւոր ըլլալով մրցումը կիսատ ձգեց)

ԱՂՉՐԿՆԵՐ
Ճենիֆըր Քափրիաթի (Մ.Ն.) - Մէլլէն Թի (Մ.Ն.) 6-1 եւ 6-3

Քիմ Բլիսթըր (Պելճիպա) - Պարպարա Շվարց (Աւստրիա) 6-1 եւ 6-1

Ժիւսթին Հենէն (Պելճիպա) - Մարթա Մարտելո (Սպանիա) 6-3, 3-6 եւ 6-1

Մեկիան Շոկնետի (Մ.Ն.) - Պրայն Սիլբըր (Աւստրալիա) 6-2 եւ 6-0

Նիքոլա Փրաթ (Աւստրալիա) - Մարթինա Միլլըր (Գերմանիա) 6-1 եւ 6-2

Թամարին Թանապիկարն (Թայլանտ) - Փեթրա Մանտիլա (Հունգարիա) 2-6, 6-2 եւ 6-2

Ամելի Մորեսո (Ֆրանսա) - Քաթարինա Սրեպոնիք (Սլովենիա) 7-5 եւ 6-3

Ալի Սուլիամա (Ճապոն) - Թինա Փիսիք (Սլովենիա) 7-6 եւ 6-0

Էլենա Տենիսիէա (Ռուսիա) - Անաստասիա Միսլինա (Ռուսիա) 6-4 եւ 6-2

Ռիթա Կրանտէ (Իտալիա) - Քրիսթի Պուկէթ (Հունաստա) 7-6 եւ 7-5

Էլենա Տանիլիտու (Յունաստան) - Թաթիանա Փանովա (Ռուսիա) 6-2, 4-6 եւ 6-0

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Երէկ՝ Հինգշաբթի, 17 Յունուար 2002, երեկոյեան ժամը 7:00ին, ֆետերասիոնի նստավայրէն ներս, տեղի ունեցաւ Լիբանանի սկստական ֆետերասիոնի ընտրութիւնները, յառաջիկայ երկու տարիներուն համար:

Նորընտիր ֆետերասիոնի մաս կը կալանէ միութեան տարիներու շրջանային խմբապետ՝ էրք. Վաչէ Նաճարեան:

Նորընտիր ֆետերասիոնը կը բաղկայայտուի հետեւեալներէն.-

1. Ռուբլ Լախ
2. Քամիլ Ֆախր
3. Հասան Համուան
4. Նապիլ Պալտուն
5. Վաչէ Նաճարեան
6. Ամին Միքաթի
7. Էլի Ապտալա
8. Ժոզէֆ Խալիլ
9. Էլի Եուէֆ
10. Եուէֆ Խալաթ
11. Հիւսէյն Շաքար

Հ.Ս.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Պուրճ Համուտ,
17 Յունուար 2002

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՄԱՅԲԸԸ ԾՈՐՏԸՆԻ ԱՄԷՆԷՆ ԾԱՆՐ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

Երէկուան մրցումներուն, Մայքըլ Ծորտըն իր ապարկեցին ընթացքին ամէնէն ծանր պարտութիւնը կրեց, երբ անոր կազմը Ուաշինկթըն Ռեյզըրսը 111-67 արդիւնքով պարտուած Հենուացաւ Նիւ Ճըրզի Նէյթսի դաշտէն: Նախապէս, Ծորտըն, Ծիբակո Պոուլզի Հետ աւելի նուազ արդիւնքով պարտութիւն մը կրած էր Նիւ Եորք Նիքսէն (Նոյեմբեր 1992ին), 112-75 արդիւնքով:

Ծորտըն, որ Նէյթսի ղէմ նախորդ Հանդիպումին նշանակած էր 45 կէտ, երէկուան մրցումին նշանակեց 10 կէտ: Ան դաշտ ներկայացաւ մրցումին միայն կէսին: Նէյթսի մարզիկ Քէյթ Վան Հոուն նշանակեց 27 կէտ, իսկ անոր խմբակից Ճէյսըն Քիտ՝ 11 կէտ եւ 12 Էսիսը: Նէյթսը, թէ նէթց ապստով արձանագրեց յաջողական իր վեցերորդ յաղթանակը:

Պոսթընի մէջ, Սելիթքս միայն մէկ կէտ տարբերութեամբ՝ 101-100, պարտութեան մատնեց իր հիւրը՝ Նիւ Եորք Նիքսը, արձանագրելով յաջողական իր երրորդ յաղթանակը:

Մրցումին աւարտէն 10 երկվայրկեան առաջ, Սելիթքսի մարզիկ Էրիք Սթրիքլենտ չորս կէտ նշանակելով, արդիւնքը բարձրացուց 101-97ի: Հակառակ անոր որ մետասաներորդ պահուն Բրոք Թոմաս նշանակեց երեք կէտնեց կողով մը, արդիւնքը դարձնելով 101-100, սակայն՝ անօգուտ, որովհետեւ մրցումին աւարտին մնացած էր... 3 երկվայրկեան:

Լոս Անճելըսի մէջ, Լէյքըրը 102-96 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրին՝ Մայքեմի Հիթին: Մրցումին աւարտէն երեք վայրկեան առաջ, Լէյքըրը 96-90 արդիւնքով կը գերազանցէր Հիթը, սակայն դաշտին տէրերը այդ արդիւնքէն ետք ոչ մէկ կէտ կրցան նշանակել եւ ապստով կրեցին իրենց 9րդ պարտութիւնը:

Լէյքըրի մարզիկ Բոպէ Պրայնթը նշանակեց 29 կէտ, իսկ Հիթի մարզիկ Արնո Կոնսընսկի՝ 28 կէտ եւ 11 ռիպուլներ:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները: Պոսթըն Սելիթքս - Նիւ Եորք Նիքս 101-100 Թորոնթո Ռեյզըրզ -

Հիւսթըն Ռեյզըրզ 109-103

Նիւ Ճըրջի Նէթս -

Ուաշինկթըն Ռիպարտ 111-67

Սաքրամենթո Քինկկ -

Տեխաս Սալթսթ 112-107

Միլուոքի Պաքս -

Ինսիանա Փէյթըր 105-100

Փորթլենտ Թրէյլ Պէյլըրզ -

Ֆեռնիքս Սաւն 108-99

Եուրթ Ճէյ - Սիէթլ Սուիթս 95-80

Կոլորադո Սթըյթ Ուոլֆըրզ -

Քլիվլենտ Քաւալիըր 117-88

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը: Ֆիլատելֆիա Սիքսըրզ - Շարլոթ Հոնգլէթ

Շիքագո Պուլզ - Աթլանթա Հոքս

Սալաս Մավըրրիքս - Մեմֆիս Կրիզիդ

Եուրթ Ճէյ - Սան Անթոնիո Սիքըրզ

Մայքեմի Հիթ - Փորթլենտ Թրէյլ Պէյլըրզ

ԱԼԻԵՒ ԵՒ ՌԻԻԼՍԵՆ ԱՐԾԱՐԾԱԾ ԵՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱԳԻ ՀԱՐՅԸ

Ազրայէլեանի նախագահ Հայտար Ալիեւ Երեքշաբթի օր ընդունած է Ազրայէլեանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ռոս Ուիլսոնը:

Ըստ Ազրայէլեանի «Կազէթ 525» թերթին՝ դեսպանը Ալիեւի փոխանցած է նախագահ Ճորճ Պուշին հետաքրքրութիւնը Լեռնային Ղարաբաղի տագնապին շուտափոխ լուծման նկատմամբ: Ուիլսոն նաեւ յայտնած է, թէ նոյն նիւթին շուրջ խօսակցութիւններ ունեցած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուելի հետ, որ վճռական ցանկութիւն յայտնած է Ազրայէլեանի հետ համագործակցութիւնը ընդլայնելու առնչութեամբ: Դեսպանը Ալիեւի տեղեկացուցած է, թէ յառաջիկայ ամիսներուն Ազրայէլեանի պիտի այցելեն ամերիկացի շարք մը պաշտօնատարներ, քննարկելու համար Միացեալ Նահանգներ - Ազրայէլեան յարաբերութիւններու ընդլայնման հեռանկարները:

Իր կարգին, Հայտար Ալիեւ յայտնած է, թէ թիւ 907 Յօդուածի առկայութեան ետք համագործակցութեան հնարաւորութիւնները բազմապէս են:

Ըստ «Կազէթ 525»-ի, դեսպան Ուիլսոն նաեւ հանդիպում ունեցած է Ազրայէլեանի պաշտպանութեան նախարար Սաֆար Ապիեւի հետ: Ապիեւ յայտնած է, որ Ազրայէլեանի ժողովուրդին զլիւսաւոր հարցը «բունդարուում» հոդերու «ազատագրում» է, եւ թէ Ազրայէլեանը կը մտահոգեն նաեւ «Հայաստանի ունեցած հաւաքական քանդուածի գէնքերը»: Ըստ թերթին, դեսպան Ուիլսոն համաձայն գտնուած է Ապիեւի հետ, եւ յայտնած է, թէ «Միացեալ Նահանգներու կառավարութեան առաջնակարգ խնդիրն է Ազրայէլեանի տարածքային ամբողջականութեան, անվտանգութեան եւ տարածաշրջանային կայունութեան վերականգնումը»:

ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Մասնակցութեամբ՝
ՇԱԼԵՊԻ ԿՐԹԱՍԻՐԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԱՃԵՄԵԱՆ ԹԱՏԵՐԱՆՈՒՄԸ

Կը ներկայացնէ՝
«ԱՄՈՒՍԻՆՆԵՐ»
ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Շեղի կ'ունենայ 2 Փետրուար 2002, երեկոյեան 8:30ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ, Պուրճ Համուտ:

Տոմսերը կարելի է ստանալ՝
Optic Սեմերճեան (հեռ. 01-260756), Anser Travel (հեռ. 01-562870 1), Արսլանեան հաստատութիւն (հեռ. 01-252052) եւ վարչութեան անդամները:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԽՍՏԱՅՈՒՅ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԲԱՆԱԿՆԵՐՈՒՆ ԸՈՒՐՁ ՊԱՇԱՐՄԱՆ ՕՂԱԿԸ

Երէկ ուշ գիշերին, պաղեստինցի պիւնտալ մը ձեռնառումը մը նետած է սրահի մը մէջ, ուր պապի մը առիթով տեղի կ'ունենար իրախճանք: Միջադէպը պատահած է կեդրոնական Իսրայէլի Հատերա քաղաքին մէջ: Ըստ նախնական հաղորդումներու, արձանագրուած է 5 քոն եւ կան բազմաթիւ վիրաւորներ:

Միւս կողմէ, իսրայէլեան բանակը խստացուց պաշարման օղակը պաղեստինեան քաղաքներուն շուրջ, ինչպէս նաեւ՝ պաղեստինցի ծայրայեղական մը սպաննեց՝ սրելով շրջանին մէջ լարուածութիւնը:

Իսրայէլի ապահովութեան սեղմ դաիլի-ճը Զորքը քաղաքի ուշ գիշերուան արտակարգ նիւստին ընթացքին որոշած էր խստացնել պաշարման օղակը:

Պաղեստինցի գլխաւոր բանագնաց Սաէպ Ուրաբաթ դատապարտեց Իսրայէլի որոշումը, դիտել տալով, որ անիկա մաս կը կապուի կացութիւնը ինչպէս արուսի ուղղելու ճիգերուն: Ուրաբաթ ըստ, որ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն հետաքրքրուած չէ իսրայէլու լարուածութեամբ: Ուրաբաթ նաեւ կոչ ուղղեց ամերիկացի յատուկ պատուիրակ Անթոնի Չինիի շրջան վերադառնալու:

Իսրայէլ սակայն կարեւորութիւն չի տար քննադատութիւններուն՝ ամբողջ պատասխանատուութիւնը պաղեստինեան իշխանութեան նախագահ Տաէր Արաֆաթի ուսերուն վրայ դնելով: Իսրայէլ կ'ըսէ, որ քանի մը օրերու ընթացքին թափ տուած վայրագութեան պատճառը Արաֆաթն է, որ անհրաժեշտ միջոցառումներուն չի դիմել վերջ տալու համար Իսրայէլի դէմ յարձակումներուն:

Ամերիկացի քոնկրէ-սակաւ Ռիչըրդ Կեփ-հարտ, որ միջինարեւելեան շրջապտույտի մը ձեռնարկած էր, Երուսաղէմի մէջ ըստ, որ յաւելեալ աշխատանք պէտք է:

ԻՐԱՔ ՊԱՏՐԱՍԵ Ե ԴԷՄ ԴՆԵԼՈՒ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ

Շոցի պատերազմին 11 ամեակին առիթով արտասանած իր ճարտի մէջ, Իրաքի նախագահ Սաւտուան Հիւսէյն յայտարարեց, որ իր երկիրը պատրաստ է դէմ դնելու եւ ձախողութեան մատնելու ամերիկեան պիւնտալեան նոր յարձակումը, որ պիտի իյնայ սահաբեկչութեան դէմ պայքարին ծիրէն ներս:

Պատկերասփռում

NARRA TRADING & GENERAL SERVICES CO. S.A.R.L.

ՆԱՐԱ ԹՐԵՅՏԻՆԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ա.Պ.Ը.

(Սեփականատեր՝ Վաիտ Մանուշակեան)

ՎԻԵՌՆԱՄԵՆ ԵԹՈՎՊԻԱՅԵՆ ՍՐԻ ԼԱՆՔԱՅԵՆ ԵՒ ՖԻԼԻՓԻՆԵՆ ՍՊԱՍՈՒԲԵՐՈՒ ԱՊԱՇՏՈՒՄ

- Անմիջական յանձնում եւ ապահովագրութիւն:
- Մեր նշանաբանը՝ անկեղծութիւն, ապահովութիւն,
- Մասնաւոր գիներ, վճարման դիրքութիւն եւ երկար տարիներու փորձառութիւն:

Պաշտոնէ, City Hospital հիւանդանոցի փողոց, «Էլի» Դրամատան շէնք, 4րդ յարկ: Հեռ. 03/324799, 01/897633 եւ 03/489989

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5055

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- ՇՈՐՈՒՆԱԿԱՆ**
1. Ասիական մայրաքաղաք:
 2. Զինուորական հրամանատարութիւն:
 3. Դազբիլ - Դ. դարու հերթերի անուն:
 4. Մովսէսի երկրագրութեան կազմակերպ - Գոյա-տեւէ:
 5. Իրբե - Յուցական անուն:
 6. Բուսական գունաւորող նիւթ - Մոզսէս մարգարէի դրկած մարդիկը մինչեւ հո'ն լրտեսեցին:
 7. Գեղամ Սարեանի երկերէն - Մոյլ:
 8. Վերջապէս - Փոյլ:
 9. Լծկան շորքոտանի - Տոն:
 10. Առաջնորդ - Սուր ձայն:
 11. Նոյն գիրերը - Յու-կան - Յուցական անուն:

ԹԻՒ 5054

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Պ	ՈՒ	Տ	ՈՍ	Փ	Ս	Փ	Ս	Փ
2	ՈՒ	Ր	ՈՒ	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
3	Լ	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
4	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
5	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
7	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
8	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
9	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԵՒ ԱՆԳԱՐԱ Կ'ՈՂՁՈՒՆԵՆ ՔԼԵՐԻՏԵՍ - ՏԵՆՔԹԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Մ. Նահանգներու նախագահ Ճորճ Պուշին եւ Թուրքիոյ վարչապետ Պիլիէնի Ֆեւրիթ Զորքը քաղաքի օր ողջունած են կիպրոսի երկու համայնքներուն ղեկավարներուն միջեւ խաղաղարար բանակցութիւններու ձեռնարկելու որոշումը:

Կիպրոսի նախագահ Կաֆէոս Քլեբիտիս եւ Թուրքիոյ վարչապետ Պիլիէնի Ֆեւրիթ Զորքը կիպրոսի երկու համայնքներուն ղեկավարներուն միջեւ խաղաղարար բանակցութիւններու ձեռնարկելու որոշումը:

Պուշին, որ Սպիտակ Տան մէջ տեսակցութիւն ունեցած է Գեւորթի հետ, թղթակցութիւն յայտնած է, թէ շատ քաջալերական կը նկատէ «Ներկայիս տեղի ունեցող տիւրկեր»:

Ան շնորհակալութիւն յայտնած է Թուրք ղեկավարներուն, որ քաջալերած են տիւրկերը:

ՓԱՌԸԸ ԻՍԼԱՄԱՊԱՏԵՆ ԱՆՅԱԻ ՆԻՒ ՏԵԼՂԻ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուելը, որ հարաւային ասիական երկիրներու շրջապտույտի մը ձեռնարկած է, երէկ Նիւ Տէյի ժամանեց՝ Հնդկաստան - Փաքիստան պատերազմը կանխարգիլելու համար:

Փաուելը ըստ, որ անհրաժեշտ է որ Փաքիստան եւ Հնդկաստան գիտակցին դիւանագիտական միջոցներով լուծումի մը կարելորդութեան: Ան ակնարկեց, որ ցարդ երկու երկիրներն ալ յանձնառութիւն յայտնած են պատերազմի ընտրանքէն խուսափելու: Բայցեւայնպէս, կացութիւնը կը մնայ չափազանց վտանգաւոր, դիտել տուաւ ամերիկացի պաշտօնատարը:

Ուշիկեղծը, որ կ'ուզէ շրջանը կայուն պահել, Աֆղանիստանի դէմ յայտարարած պատերազմին ընթացքին, կ'ըսէ, որ Հնդկաստան եւ Փաքիստան պէտք է ահաբեկչութեան եւ ոչ թէ իրարու դէմ պատերազմին:

Փաքիստանի նախագահ Փերվէզ Մուշարաֆ թէ Եւ խոստացած է ճնշել ծայրայեղական իսլամականները, սակայն Հնդկաստան տակաւին պատրաստ վիճակի մէջ կը պահէ իր ուժերը՝ սպասելով գործնական քայլերու: